



ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ԳՅՈՒՄՐԻ 2018թ.

ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՀՀ Շիրակի մարզի (այսուհետ նաև՝ մարզ) զբոսաշրջության զարգացման հայեցակարգը (այսուհետ նաև՝ հայեցակարգ) մշակվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից՝ հաշվի առնելով ՀՀ Շիրակի մարզի զբոսաշրջության ոլորտի ներկա վիճակը, մարզի 2018-2025 թթ. զարգացման ռազմավարության մեջ սահմանված առաջնահերթությունները, ՀՀ Շիրակի մարզում զբոսաշրջության ուղղության զարգացման վերաբերյալ տեղական զբոսաշրջային գործակալությունների ու մասնավոր հատվածի կողմից ներկայացված խնդիրների ու առաջարկությունների ուսումնասիրության և վերլուծության արդյունքները:

Հայեցակարգի նպատակն է համակարգված ձևով ներկայացնել ՀՀ Շիրակի մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունները, մարզի առավելություններն ու ներուժը, բացահայտել և նկարագրել այն զբոսաշրջային ուղղությունները, որոնք կարող են շոգեքարշի դեր կատարել ոլորտի զարգացման համար: Հայեցակարգը նպատակ ունի նաև բացահայտել զբոսաշրջության բնագավառում առկա հիմնախնդիրները և նշագծել մարզում դրանց լուծման ուղիները:

Հայեցակարգն իր մեջ ներառում է Շիրակի մարզի զբոսաշրջային ոլորտի առկա վիճակի ամփոփ վերլուծությունը, նկարագրում է մարզում զբոսաշրջության զարգացման հիմնական նախատեսվող ուղղությունները, հիմնավորում դրանց զարգացման անհրաժեշտությունը, վերլուծում դրա համար անհրաժեշտ ներուժի առկայությանը և դրա օգտագործմանը վերաբերող հարցերը, բարձրացնում խոչընդոտ հանդիսացող հիմնախնդիրները, առաջարկում դրանց հաղթահարման հնարավոր ուղիներն ու մեթոդները:

ՀՀ Շիրակի մարզում (այսուհետ նաև՝ մարզ) զբոսաշրջության զարգացման հայեցակարգն իր մեջ ներառում է մարզում զբոսաշրջության ոլորտի, որպես գերակա ուղղության, համակարգային զարգացմանն ուղղված հարցերը:

Շիրակի մարզը և, մասնավորապես, Գյումրի քաղաքը, միշտ էլ աչքի են ընկել իրենց յուրահատուկ կոլորիտով, պատմամշակութային ժառանգությամբ, հայտնի մարդկանցով, գեղեցիկ ու մաքուր բնությամբ, հարուստ էնդեմիկ խոհանոցով:

Մարզի հնարավորությունները և հեռանկարները զբոսաշրջության զարգացման համար ահռելի են: Այստեղ կարելի է զարգացնել ինչպես պատմամշակութային և քաղաքային զբոսաշրջությունը, այնպես էլ աշխարհում արագ մասսայականություն հավաքող զբոսաշրջային այլ ուղղություններ՝ էկոլոգիական, գյուղական, արկածային, սպորտային, խոհանոցային զբոսաշրջությունը:

«Կումայրի» արգելոցի (Հին Գյումրիի) առկայությունն ու դրա ամբողջական վերականգնումը կարող է աճի լավագույն իմպուլսային բևեռ հանդիսանալ մարզում զբոսաշրջային ոլորտի զարգացման համար:

Զբոսաշրջային բոլոր ուղղությունների որակյալ, հավասարաչափ և համակարգված զարգացման համար անհրաժեշտ են ներդրումներ և արդյունավետ բիզնես-մոդելների առկայություն: Այստեղ մեծ կարող է լինել ՊՄԳ մոտեցումների, ինչպես նաև՝ համայնքների դերը: Մյուս կողմից, զարգացման պետական և միջազգային ծրագրերում մարզի ակտիվ ներգրավվածությունը նույնպես կարող է լավ խթան հանդիսանալ ոլորտի արագացված զարգացման համար:

Մարզն ունի հարմար աշխարհագրական դիրք և տրանսպորտային լավ ենթակառուցվածքներ: Այն համեմատաբար մոտ է Երևանին, այստեղով է անցնում Հայաստանն արտաքին աշխարհին կապող երկաթգիծը, Գյումրիում առկա է նաև գործող միջազգային օդանավակայան: «Հյուսիս-հարավ» տարանցիկ մայրուղու առաջին հատվածի շահագործումը Հայաստանը, Շիրակի տարածաշրջանով, ևս մի ուղղությամբ կկապի Վրաստանի և, Վրաստանի տարածքով՝ այլ երկրների հետ:

Հարմար տրանսպորտային ենթակառուցվածքների առկայությունն ու տարանցիկ երթևեկության հնարավոր աճը նույնպես կարող են նպաստող գործոններ հանդիսանալ զբոսաշրջության զարգացման համար:

Միաժամանակ մարզում առկա են զբոսաշրջությանը խոչընդոտող և խանգարող մի շարք գործոններ, որոնց զգալի մասը բնորոշ է ոչ միայն Շիրակի մարզին, այլ նաև ողջ հանրապետությանը:

Սպասարկման ոլորտում առկա ոչ բավարար և ոչ պրոֆեսիոնալ մակարդակը, միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վատ վիճակը, հասարակական տրանսպորտի անկանոն և ոչ պատշաճ որակի աշխատանքը, բնապահպանական խնդիրները, մարդկանց մի ստվար մասի մենթալիտետը, հյուրանոցային փոքր ֆոնդը, զբոսաշրջային ուղղությունների ինֆորմացիոն բաղադրիչի հատվածային բնույթն ու ցածր որակը, պատմա-մշակութային օբյեկտներին կից անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունն այն հիմնական խնդիրներն են, որոնց ոչ պատշաճ լուծումը կարող է վտանգել մասսայական զբոսաշրջության ապագան մարզում:

Կարևորագույն խնդիրներից է հանդիսանում նաև մարզի հնարավորությունների և առավելությունների ապրանքայնացումն ու գովազդումը:

Հնարավորությունների օգտագործման և խանգարող գործոնների վերացման (մեղմման) գործընթացը նախատեսվում է իրականացնել ինչպես մարզի ջանքերով, այնպես էլ՝ պետական, միջազգային կառույցների և բիզնես ոլորտի հնարավորությունների օգտագործմամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ.....	i
I ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	2
II ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌՈՂՋ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.....	3
III ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	6
3.1 Քաղաքային զբոսաշրջություն.....	6
3.2 Խոհանոցային զբոսաշրջություն (Գաստրոտուրիզմ).....	9
3.3. Պատմաճարտարապետական զբոսաշրջություն.....	10
3.4. Ակտիվ զբոսաշրջություն.....	12
3.4.1. Գյուղատնտեսական զբոսաշրջություն (Ագրոտուրիզմ).....	12
3.4.2. Շուրջտարյա արկածային և սպորտային զբոսաշրջություն.....	13
IV ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ.....	17
4.1. Գյուճերի քաղաքի ճարտարապետական տեսքն ու դրա պաշտպանությունը.....	17
4.2. Հյուրանոցային փոքր ֆոնդ.....	18
4.3. Ծառայությունների մատուցման ցածր մակարդակ.....	19
4.4. Շերտային ուղղվածություն ունեցող և պատրաստի բիզնես մոդելների բացակայություն.....	21
4.5. Զբոսաշրջային ուղղություններին և օբյեկտներին, տրանսպորտի գրաֆիկին վերաբերվող ինֆորմացիայի համակարգվածության և տեղայնացվածության, ինչպես նաև տրամադրման հստակ մեխանիզմների բացակայություն.....	22
4.6. Անբարեկարգ միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհներ.....	24
4.7. Հուշարձաններին և կոթողներին հարող տարածքներում՝ սպասարկող ենթակառուցվածքների բացակայություն.....	24
4.8. Տրանսպորտային խնդիրներ.....	25
4.9. Բնապահպանական խնդիրներ.....	26
4.10. Ոչ բավարար աշխատանք՝ զբոսաշրջային օպերատորների և ինֆորմացիոն կայքերի հետ.....	27
V ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT).....	27
VI ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....	29

I ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հայեցակարգի նպատակն է՝ նկարագրելով ՀՀ Շիրակի մարզի զբոսաշրջային պոտենցիալը, առաջարկելով զբոսաշրջային պրոդուկտներ, բացահայտելով հիմնական խոչընդոտները և առաջարկելով քայլեր այդ խոչընդոտների վերացման համար՝ նպաստել մարզում զբոսաշրջության համակարգային զարգացմանը:

Ոլորտին վերաբերվող միացյալ հայեցակարգի մշակումն անհրաժեշտ փուլ է՝ մարզում զբոսաշրջությանը վերաբերվող հարցերի միասնական գնահատման, առավելությունների և հիմախնդիրների շեշտադրման, լուծումների առաջարկման, ինչպես նաև՝ գործնական քայլերի «ճանապարհային քարտեզի» մշակման ուղղությամբ:

ՀՀ Շիրակի մարզում զբոսաշրջության զարգացումն ունի մեծ հեռանկար, քանի որ մարզում առկա է զբոսաշրջության հիմնական ճյուղերի համակարգված և փոխլրացնող զարգացման համար անհրաժեշտ և մեծածավալ ներուժ: Մարզը կարող է հետաքրքիր լինել ինչպես ներգնա, այնպես էլ՝ ներքին զբոսաշրջության զարգացման համար:

Զբոսաշրջության զարգացման գործում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես ոլորտում իրենց հաջողվածությունն արդեն ապացուցած ունիվերսալ լուծումները, այնպես էլ՝ տեղական առանձնահատկությունները: Անհրաժեշտ է հավասարաչափ ուշադրություն դարձնել այդ լուծումների ամբողջականությունը կազմող բոլոր տարրերին, քանի որ ոլորտն առավել զգայուն է ցանկացած մանրուքի նկատմամբ:

Հայեցակարգի և այստեղ նկարագրված նպատակների իրագործումը ժամանակի հրամայականն է և ունի մեծ կարևորություն ինչպես մարզի, այնպես էլ Հայաստանի տնտեսության զարգացման համար:

Հայեցակարգի իրագործումը պետք է իրականացվի տեղական յուրահատկությունները և միջազգային փորձն ու լուծումները հաշվի առնելով: Կատարվող քայլերը, հատկապես ռեսուրսների սղության պայմաններում, պետք է կատարվեն այն թիրախային կետերում, որոնք կապահովեն առավելագույն համակարգային էֆեկտ և կառաջացնեն նոր լրացուցիչ ռեսուրսներ՝ հետագա զարգացման համար:

Մարզում զբոսաշրջության համակարգային զարգացման, ինչպես նաև՝ դրան խոչընդոտող հարցերի վերաբերյալ լուծումների մշակման և հետևողական իրականացման ուղղությամբ՝ անհրաժեշտ է մշտական համագործակցություն ապահովել Գյումրի քաղաքի քաղաքապետարանի, ՀՀ Շիրակի մարզի համայնքների, ՀՀ զբոսաշրջության պետական կոմիտեի, ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ մշակույթի նախարարության, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, ՀՀ դատախազության, ՀՀ ներքին գործերի նախարարության և շահագրգիռ այլ պետական մարմինների հետ:

II ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌՈՂՋ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ստորև նշված մոտեցումներն ու սկզբունքները պետք է միաժամանակյա, զուգահեռ և հավասարաչափ կերպով դրված լինեն զբոսաշրջության զարգացման քաղաքականության իրականացման հիմքում՝ ծառայելով ոլորտի (երկրի) առողջ, բազմավեկտոր և հավասարակշռված զարգացմանը, ինչպես նաև՝ ապահովելով այդ աճի անդառնալիությունն ու պաշտպանվածությունը:

ա) Այն ամենն, ինչ արվում է զբոսաշրջիկներին գրավելու համար, առաջին հերթին պետք է ուղղված լինի և ծառայի տեղական բնակչությանը, այսինքն՝ զբոսաշրջության զարգացմանը նպաստող միջոցառումների առաջնային շահառուները պետք է սկզբում լինեն տեղական բնակչությունը, ապա միայն նոր՝ զբոսաշրջիկները:

Զբոսաշրջային ոլորտը մարզում չի կարող զարգանալ ավտոնոմ՝ առանց մարզի բնակչության մասնակցության և առանց նրանց առօրյա կենցաղի մի մասը կազմելու: Զբոսաշրջիկների ճնշող մեծամասնությունը չի ցանկանում ապրել «ոսկե վանդակում», այլ մեծ ցանկություն է ունենում իր ժամանակն անցկացնել այն միջավայրում, որտեղ և որով ապրում են տեղի բնակիչները: Եթե բնակչության կենցաղը գրավիչ է, ապա զբոսաշրջիկի ուղևորությունը լինում է ավելի իմաստավորված, իսկ տպավորություններն՝ ավելի վառ: Ավելին, նրանց մի մասի մոտ ցանկություն է առաջանում կրկին վերադառնալու և նորից ապրելու այդ կենցաղով:

Առավել հետաքրքիր է հենց այն փառատունը, ծեսը, միջոցառումը, ազգայինի հիմքով գործող ռեստորանը, կամ գյուղական հյուրատունն ու արհեստանոցը, որը բնակչության առօրյա կենցաղի մի մասն է կազմում, քան՝ եթե դա կազմակերպվում է ցուցադրական և արհեստաստեղծ ձևով, միայն զբոսաշրջիկների համար և միայն զբոսաշրջիկների մասնակցությամբ, մեծամասամբ նաև՝ ուռճացված գներով:

Բացի այդ էլ՝ բարեկարգ ճանապարհները, մաքուր բնությունը, լավ սպասարկումը, առողջ սնունդն ու սեփական մշակույթին և ավանդույթներին ծանոթանալն, առաջին հերթին, անհրաժեշտ է հենց տեղի բնակիչներին, ապա նոր միայն զբոսաշրջիկներին: Սեփական քաղաքացիները և նրանց շահերը միշտ պետք է լինեն առաջնային:

Եվ եթե զբոսաշրջիկը տեսնի բարեկեցիկ կենցաղ ունեցող, արարող ու ստեղծագործող, սեփական մշակույթով ապրող կիրթ ու բարեհամբույր հասարակություն, ապա սրանից ավելի լավ մագնիս՝ զբոսաշրջության զարգացման համար՝ դժվար է պատկերացնել:

բ) Անհրաժեշտ է հստակ և նախապես մոդելավորել արվող քայլերի հերթականությունն ու դրանց փոխանման կառուցվածքն ու մեխանիզմները: Միջոցների սղության պայմաններում սա կարևորագույն բնույթ է ստանում: Քաղաքականության հիմքում պետք է դրված լինի առավելագույնս ռացիոնալ բնույթ ունեցող բազմապատկիչ էֆեկտների՝ թվային, չափվող և վերահսկվող համակարգի ստեղծումն ու ուղղորդումը: Բազմավեկտոր դաշտը պետք է մշտապես տեսանելի և չափելի լինի:

գ) Անհրաժեշտ է մշտապես հստակ հասկանալ զբոսաշրջային կոնկրետ ծառայությունների գնագոյացման արժեքային (Tourism Value Chain), այսինքն՝ թե ինչ բաղադրիչներից և ինչ սահմաններում է գոյանում ծառայության ինքնարժեքը, շահութաբերության մակարդակը, վաճառքի գինը, որ ծառայություններն ու ենթակառուցվածքային բաղադրիչներն են հանդիսանում առավել արժեքավոր, համակարգաստեղծ և առաջնային: Սա շատ կարևոր է այն տեսանկյունից, որ կարող է օգնել խրախուսելու առավել մեծ ավելացված արժեք ունեցող ծառայությունների զարգացումը և խուսափելու՝ քիչ մրցունակ ծառայությունների զարգացման առաջնահերթությունից: Մյուս կողմից էլ՝ արժեքային խորքային պատկերացումը թույլ է տալիս գնահատել ծառայությունների, ենթաուղղությունների և արվող նախաձեռնությունների մրցունակության մակարդակը, դրա մեծացման հնարավորությունները: Արժեքայիններն ունեն ինչպես քանակական (թվային-չափելի), այնպես էլ՝ որակական (անուղղակի ազդեցության) բաղադրիչներ:

Հայտնի է, որ արժեքային մասնակիցները, որոնք միշտ շահագրգռված են առավել քիչ ինքնարժեքով և առավել մեծ շահութաբերությամբ, անընդհատ փնտրում են նոր տարբերակներ և լուծումներ, կիրառում են արդեն հաջողված փորձը: Սակայն, հաճախ, նրանց անհրաժեշտ է լրացուցիչ, առավելապես՝ վարչարարական և օրենսդրական աջակցություն՝ արժեքային մրցունակությունը բարձրացնելու համար: Այս առումով, անհրաժեշտ է մշտական մոնիթորինգի տակ պահել բոլոր առկա արժեքայիններն ու դրանց բաղկացուցիչ մասեր կազմող միկրոմաս – միկրոարժեքայինները: Անհրաժեշտ է մշտական կապ պաշտպանել արժեքայինների մասնակից ընկերությունների և հատվածների հետ:

դ) Ոլորտի զարգացման համար կարևորագույն նշանակություն ունի համակարգային մոտեցումը և ոլորտի բոլոր ճյուղերի, մասնավորապես՝ սույն հայեցակարգում նկարագրված ուղղությունների միաժամանակյա և զուգահեռ զարգացումը: Վերը նշված փոխսնման և բազմապատկիչ ազդեցությունից բացի՝ այս մոտեցումը թույլ է տալիս շահել թե՛ ժամանակային և թե՛ որակական առումով:

Զբոսաշրջության յուրահատկությունն այն է, որ այստեղ պահանջվում է տեսականի և ինչքան փոքր է այդ տեսականին, այնքան ավելի վատ զարգացած և քիչ արդյունավետ է լինում ոլորտը: Ոլորտի ուղղությունների միաժամանակյա կայացումը բերում է նաև դրանց՝ «փոխադարձ խնամքի» պաշտպանիչ արդյունքին, երբ որ զբոսաշրջության մի ենթաճյուղը շահագրգռված է մյուսի կայացածության պահպանմամբ, որովհետև սեփական շահութաբերության ավելացման համար սա ևս մի լրացուցիչ գործընկեր - հարթակ է: Հիշենք, որ քիչ չեն կոմբինացված զբոսաշրջային փաթեթները:

ե) Զբոսաշրջությունը զգայուն է մանրուքների նկատմամբ: Հյուրանոցի լավ վերանորոգված համարում ժամանակին չդրված հողաթափերը, չփոխված սրբիչը, խափանված ինտերնետ – միացությունը, որակյալ տրանսպորտային միջոցի կոպիտ ու ծխող վարորդը և այլ բազում ու միջազգային ստանդարտներում վաղուց արդեն նկարագրված ու դասակարգված մանրուքների պահպանման հարցում առաջացած ցանկացած թերացում՝ ունակ է մեծ հարված հասցնելու զբոսաշրջիկի տպավորություններին և տրամադրվածությանը: Անհրաժեշտ է հասկանալ և մարդկանց հոգեբանության մեջ մտցնել այն, որ զբոսաշրջիկը վճարում է լավ տրամադրության համար, ինչպես նաև այն, որ նրանց մեծ մասն այստեղ ծախսվող

գումարները, հնարավոր է, վաստակել է ծանր աշխատանքով ու այստեղ է եկել այդ աշխատանքից գոնե մի քանի օր վերականգնվելու համար: Այս մտածողությունն ու գաղափարներն անհրաժեշտ է շարունակական և կուռ կերպով արմատացնել բնակչության շրջանում:

զ) Անհրաժեշտ է հետևողականորեն, այդ թվում նաև՝ զբոսաշրջության վառ և կոլորիտային հենքի զարգացման միջոցով, փոխել մարզի բնակչության հետերկրաշարժային հոգեբանությունը՝ մարզին վերադարձնելով իրեն հատուկ կենսուրախությունը, աշխատասիրությունը, գործարարությունը, սեփական ուժերին ապավինելու ձգտումը: Իհարկե, սա համալիր միջոցառումների ցանկ է, որտեղ պետք է ընդգրկվեն կրթական ոլորտը, հոգեբանները, զանգվածային լրատվամիջոցները, սակայն զբոսաշրջության զարգացումը նույնպես պարարտ դաշտ կարող է հանդիսանալ այս երևույթի շտկման գործում: Չպետք է նաև մոռանալ, որ աղքատության դեմ պայքարը նույնպես կարևոր հիմնաքար է՝ այստեղ նշված հիմնախնդրի լուծման գործում: Անհրաժեշտ է հետևողականորեն, միասնական և արհեստավարժ կերպով, մշակել և ներդնել մարզի նոր «իմիջը»՝ հիմնված բարգավաճման, հումորի, պատմամշակութային մեծ հաստության, աշխատասիրության, լավատեսության, ստեղծագործ մտքի, կրթվածության ու բարձր կուլտուրայի գաղափարների և հենքի վրա: Անհրաժեշտ է, որ սա լինի ոչ միայն արտաքին «ցուցափեղկ», այլ նաև՝ իրական կյանքի ոճ և ապրելու ներքին սկզբունք: Մասնակիորեն՝ սա լավ մոռացված հինն է:

է) Շարունակելով միտքը, անհրաժեշտ է նշել նաև ևս մի կարևոր մոտեցման մասին, որի ոչ հստակ և ոչ միանշանակ լինելը՝ մարզի զբոսաշրջության ոլորտի մասնակիցների կողմից մատնանշվում է որպես մարզի, մասնավորապես՝ Գյումրի քաղաքի, արտաքին դրական և այստեղ կանչող «իմիջի» կայացմանը խոչընդոտող լուրջ գործոն:

Խոսքն ավերիչ երկրաշարժի փաստի, մարզի տարածքի սեյսմիկ բնույթի, ինչպես նաև՝ թշվառության ակամա պրոպագանդման և գովազդման մասին է: Բանն այն է, որ մարզը և Գյումրի քաղաքը ներկայացնող ինֆորմացիոն աղբյուրների մեջ հաճախ տեղ են գտնում երկրաշարժի և դրա ծանր հետևանքների մասին պատմող նյութեր, կամ գոնե՝ հիշատակումներ: Սա վանում է զբոսաշրջիկներին, նրանցից շատերի մոտ ստեղծելով տպավորություն, որ այստեղ կամ կիսաքանդ վիճակ է տիրում, կամ որ՝ այստեղ, սեյսմիկ գոտում, գտնվելը՝ վտանգավոր է:

Երկրաշարժը, դրա ողբերգական հետևանքներն ու դասերը մեր ներքին խնդիրներն են, որոնք, անշուշտ, մենք պետք է միշտ հիշենք, սակայն այն կտրականապես պետք է մոռացության տալ, երբ խոսքը գնում է մարզի և Գյումրի քաղաքի արտաքին «իմիջի», պոտենցիալ և արդեն այստեղ ժամանած զբոսաշրջիկներին ներկայացվող լրատվական և գովազդային նյութերի մասին: Իհարկե, տեղում կարելի է մի փոքր և հպանցիկ ինֆորմացիա տալ նրանց այդ մասին, սակայն ողբերգությունը դրոշակ սարքել՝ կտրականապես չի կարելի, նամանավանդ, որ ցանկացած զբոսաշրջիկ, իր հանգստի ընթացքում, ձգտում է առավելագույնս դրական և ուրախ զգացողությունների, ինչը բնական է: Նրան չեն հետաքրքրում քո հոգսերն ու քո վիշտը: Սթրեսները և բացասական զգացողությունները նրան արդեն իսկ հերիքում են իր առօրյա, հանգստից դուրս կյանքում:

III ՄԱՐԶԻ ԶՐՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շիրակի մարզում զբոսաշրջության զարգացումը պետք է հավասարաչափ և զուգահեռ զարգանա հետևյալ հիմնական ուղղություններով.

3.1 Քաղաքային զբոսաշրջություն

Մարզում աշխատող զբոսաշրջային ընկերությունների հավաստիացմամբ զբոսաշրջիկների վրա առավել մեծ տպավորություն է գործում Հին Գյումրին:

«Կումայրի» պետական պատմա-ճարտարապետական արգելոց-թանգարանը հիմնվել է 1980թ. և ընդգրկում է Գյումրի քաղաքի պատմական միջուկը: «Կումայրի» պետական պատմա-ճարտարապետական արգելոցի պահպանման տարածքը կազմում է մոտ 1000 հա, որում ընդգրկված են պատմության և մշակույթի ավելի քան 1100 հուշարձաններ: Ներկայումս Գյումրի քաղաքի պատմական միջուկում ընթանում են վերականգման աշխատանքներ:



Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ ազգայինը պետք է ունենա ոչ միայն արտաքին բաղադրիչ՝ հանձինս հին քաղաքի տեսքի, այլ նաև ներքին բաղադրիչ, ինչը ոչ պակաս կարևոր է: Հին Գյումրին պետք է դառնա ազգային մշակույթի և Շիրակի մշակույթի հետ մոտիկից ծանոթանալու վայր:



Առաջին հերթին այն պետք է ներկայացնի տեղական ավանդույթները, խոհանոցը, արհեստները, մարզում ապրող ստեղծագործ մարդկանց, մարզի և նրա մարդկանց պատմությունը: Օտարերկրացի զբոսաշրջիկը գրեթե միշտ ցանկանում են տեսնել տվյալ երկրի ազգայինը:

Հին Գյումրու վերականգնումը և, որպես միասնական ամբողջականություն դրա գործունեությունը, ունակ է Գյումրին դարձնելու հանրապետության զբոսաշրջային առաջնային ուղղություններից մեկը, որտեղ այցելությունը կարող է գրավիչ լինել յուրաքանչյուր զբոսաշրջիկի համար:

Գյումրի ժամանող զբոսաշրջիկը պետք է նաև հնարավորություն ունենա ծանոթանալու քաղաքի (մարզի) պատմությանն ու մշակութային կյանքին: Այս առումով, կարևոր է համակարգված և ճիշտ «փաթեթավորված» ինֆորմացիայի ժամանակին ու տեղին տրամադրումը:

Քաղաքային և մարզային հարուստ պատմության առկայությունը, Գյումրին և Շիրակի մարզը դարձնում է յուրահատուկ վայր՝ նշված թեմայով հետաքրքրվող զբոսաշրջիկների համար:

Գյումրի քաղաքը միշտ ունեցել է և ունի միայն իրեն բնորոշ կոլորիտ, հնի և նորի միայն իրեն բնորոշ խառնուրդ, որը ներառում է նաև խորհրդային ժամանակաշրջանի ժառանգությունը: Գյումրի քաղաքը և Շիրակի մարզը տվել են մի շարք հայտնի մարդիկ, որոնցից շատերը մեծ ճանաչելիություն ունեն երկրի սահմաններից դուրս: Քաղաքում բնակվել և ներկայումս էլ բնակվում են շատ ստեղծագործ մարդիկ:



Շիրակի մարզում են ծնվել Ավետիք Իսահակյանը, Հովհաննես Շիրազը, Մեդ Մկրտչյանը, Մինաս Ավետիսյանը, Արմեն Տիգրանյանը, Գուժ Մանուկյանը, Գեորգի Գյուրջիկը, Սերգեյ Մերկուրովը, Գուսան Շերամը:

Հայտնի էզոթերիկ, փիլիսոփա և հետազոտող Գյուրջիկի պատմական և գիտական ժառանգության վերականգնումն ու ամբողջականացումը, նրա կենցաղին, գործունեությանը, աշխատություններին և փիլիսոփայությանը վերաբերվող հարցերի հետ կապված գիտաժողովների անցկացումը կարող է արտասահմանյան զբոսաշրջիկների մեծ և կայուն ներհոսք ապահովել:

Գյումրի քաղաքի տարածքում են նկարահանվել հայկական կինոմատոգրաֆիայի ոսկե ֆոնդը կազմող շատ ֆիլմեր՝ «Եռանկյունին», «Մեր մանկության տանգոն» «Հին օրերի երգը», «Կտոր մը երկինքը», «Ճերմակ անուրջները», «Հեղնար աղբյուրը», «Տժվժիկը» (մասնակի), «Ուրախ ավտոբուսը», «Տխուր փողոցի լուսաբացը»:



Քաղաքն ունի փառահեղ մարզական պատմություն: Այստեղ են ծնվել Լևոն Իշտոյանը, Այոշա և Ֆուրման Աբրահամյանները, Լևոն Ջուֆալայանը, Յուրի Վարդանյանը, Ռոբերտ Էմմիլյանը, Վարդան Միլիտոսայանը, Արթուր Ալեքսանյանը, Գոռ Մինասյանը և շատ այլ տաղանդաշատ մարզիկներ:

Գյումրին ունի իր լեգենդ դարձած զվարճախոսները՝ Պոլոզ Մուկուչը, Ջղեր Խաչիկը, Ծիտրո Ալեքը:

Իր ինքնատիպ ոճով առանձնանում է Գյումրու Ռուսթավելի փողոցը, որը հանդիսանում է Կումայրի արգելոց-թանգարանի մի մասը և նորովի է մարմնավորում հին Գյումրին: Փողոցը արդեն մասամբ հիմնանորոգվել է և յուրահատուկ տեսք է ստացել:

Գյումրի քաղաքում (և Շիրակի մարզում) պարբերաբար կազմակերպվում են մշակութային, մարզական, խոհարարական, հումորային և այլ ուղղվածություններ ունեցող փառատոններ և դրանց թիվը տարեցտարի աճում է:

Քաղաքում և մարզում առկա են պատմամշակութային տարբեր օջախներ՝ թանգարաններ, թատրոններ, ցուցասրահներ, արհեստանոցներ: Այստեղ ապրում և ստեղծագործում են բազում հետաքրքիր մարդիկ՝ նկարիչներ, քանդակագործներ, երաժիշտներ, գրողներ, ազգային ոճով ու ավանդույթներով աշխատող արհեստավորներ:



Ջրուսաշրջության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող շենքերի, թանգարանների (տուն-թանգարանների), մշակութային օջախների, արվեստանոցների և արհեստանոցների, քաղաքի և մարզի կոլորիտը կազմող և ներկայացնող բոլոր բաղադրիչներին վերաբերվող ինֆորմացիայի միասնական հավաքագրումը, դասակարգումը և ճիշտ ներկայացման՝ միասնական համակարգի և մեխանիզմների մշակումը, պետք է դառնան զբոսաշրջության զարգացման կարևորագույն բաղադրիչ-ուղղություններից մեկը:

Այս հարուստ ժառանգությունը կարող է թույլ տալ կազմակերպել նպատակային ներքին զբոսաշրջային ուղղություններ և առաջարկել զբոսաշրջային թեմատիկ փաթեթներ, օրինակ՝ կինո – տուր, թանգարանային տուր, արվեստանոցային և արհեստանոցային տուր, ազգագրական տուր և այլն:

Գյումրի քաղաքը (Շիրակի մարզը) ունենալով մշակութային և գիտական հարուստ ժառանգություն և ավանդույթներ, ինչպես նաև՝ հարմար տրանսպորտային ենթակառուցվածքներ, շատ հարմար հարթակ է՝ զանազան գիտական, մշակութային, գործարար հավաքների, միջոցառումների, փառատոնների կազմակերպման համար: Թեմային կարող են ծառայել մարզի պատմական կապերն

այլ երկրների և քաղաքների հետ: Սա նույնպես կարող է ավելացնել վճարունակ զբոսաշրջիկների ներհոսքը մարզ:



Այսպիսով, բաժնում նկարագրված ուղղություններն ու առկա մշակութային ժառանգությունը հզոր և անհատնում դաշտ են հանդիսանում՝ քաղաքային զբոսաշրջության ծավալային և բովանդակային ընդլայնման ու ինտենսիվ զարգացման համար:

3.2 Խոհանոցային զբոսաշրջություն (Գաստրոտուրիզմ)

Հայտնի է, որ Շիրակի մարզում մեծ թիվ են կազմում միայն մարզին բնորոշ ճաշատեսակները կամ հայտնի ճաշատեսակների միայն տարածաշրջանին բնորոշ պատրաստման եղանակները:

Շիրակի էնդեմիկ խոհանոցում պատմականորեն մեծ տեղ են զբաղեցրել ոչ միայն այսօր մեծ ճանաչում ունեցող և ավանդական ճաշատեսակները (քյալլան, թաթար - բորակին, քարի քյուֆթան, չանաղը, դազան-խորովածը, պոչի խաշլաման, չորթանը, ոսպով, բլղուրով, բանջարեղեններով և չոր մրգերով շիլաներն ու ապուրները և այլն), այլ նաև՝ տարբեր ծիսակատարությունների և տոների առթիվ պատրաստվող տոնական ուտեստները (կաղանդի գաթան, պասուց տոլման, տարաբնույթ քաղցրավենիքները, տոնական խաշիլները, ձվածեղներն ու կարկանդակները):

Այս հիմքի վրա անհրաժեշտ է նաև վերականգնել խոհարարական մեծ բաղադրիչով ժողովրդական ծեսերը և ապրանքային բնույթ տալ դրանց: Զբոսաշրջության համար սա նույնպես կարող է կարևոր մագնիս հանդիսանալ:

Խոհանոցային զբոսաշրջության զարգացման ևս մի կարևոր ուղղություն կարող է հանդիսանալ ինչպես տեղական խոհանոցը ներկայացնող սննդի օբյեկտների կազմավորման և վերապրոֆիլավորման խրախուսումը մարզում, այնպես էլ գյուղական վայրերում՝ էկո-էթնիկ սննդի ստեղծման և ներկայացման կետերի կազմավորման ուղղորդումը:

Այսպիսով, էնդեմիկ հարուստ խոհանոցի գործոնի ճիշտ օգտագործումը կարող է, զբոսաշրջության զարգացման առումով, մարզին տալ ևս մեկ կարևոր առավելություն և կարող է հիմք հանդիսանալ ևս մի կարևոր ուղղության՝ խոհանոցային զբոսաշրջության զարգացման համար:

Շատ կարևոր է «Ազգային խոհանոցի» փառատոների և ավանդական կենցաղի ցուցահանդեսների կազմակերպումը ինչպես Գյումրիում, այնպես էլ Շիրակի մարզի այլ համայնքներում:

Խոհանոցային զբոսաշրջության զարգացման առանձին ուղղություն կարող է դառնալ այսպես կոչված՝ «լիսաբոնյան ոճի» շուկաների բացումը և զարգացումը Գյումրի քաղաքում և մարզի այլ հատվածներում: Դրանց հիմնական գաղափարն այն է, որ որոշակի էթնո – կոնցեպտի մեջ կազմակերպվում է ոչ միայն ավանդական թարմ մթերքների բազմազանությունն ու վաճառքն այստեղ, այլ նաև հետաքրքիր հիմք և ենթակառուցվածքային բազա է ստեղծվում՝ տեղում էնդեմիկ ճաշատեսակների պատրաստման, ժողովրդական արհեստների զարգացման, մշակութային միջոցառումների կազմակերպման համար:

Նման հանգուցային կետերը շատ հետաքրքիր են զբոսաշրջիկների համար, հատկապես եթե հաշվի առնենք, որ միջազգային զբոսաշրջության մշակույթի մեջ արմատացած է այն գաղափարը, որ տեղի ամենահետաքրքիր վայրը շուկան է: Ուստի, զբոսաշրջիկների մեծ մասը, հայտնվելով նոր բնակավայրում, առաջիններից մեկը սկսում է փնտրել տեղի կոլորիտն արտացոլող շուկան:



3.3. Պատմաճարտարապետական զբոսաշրջություն

Շիրակի մարզում առկա են ավելի քան 200 պատմական հուշարձաններ և կոթողներ, որոնցից շատերն ունեն հազարամյակների պատմություն և ներկայացնում են ինչպես հեթանոսական, այնպես էլ քրիստոնեական ժամանակաշրջանները:



Մարզի տարածքում են գտնվում Հառիճի վանական համալիրը, Մարմաշենի վանքը, Լմբատավանքը, Երերույքի տաճարը, Ջրափիի իջևանատունը, Սև բերդը, բազմաթիվ կիկլոպյան ամրոցներ ու հեթանոսական հուշարձաններ:

Միայն այս ուղղությամբ մարզում հնարավոր է ձևավորել տասնյակ փաթեթներ, ընդ որում, որոշ պատմամշակութային հուշարձաններ (օրինակ՝ Հառիճի վանական համալիրը) ինքնին կարող են ծառայել որպես առանձին ենթաուղղություն:



« Հիրակի մարզը հարուստ է նաև նախաքրիստոնեական հնավայրերով, դամբարանադաշտերով, բերդերով, կիկլոպյան ամրոցներով, քարանձավային համալիրներով և այլն: Մարզում գտնվող նախաքրիստոնեական հուշարձաններն ու հնավայրերը բազմաթիվ են, շատերն ունեն պեղման, բարեկարգման, մոտեցնող ճանապարհների կառուցման կամ վերանորոգման կարիք:

Հատկանշական է առանձնացնել Բենիամինի անտիկ դաստակերտը, Հոռոմ և Վարդաքար գյուղերի միջև ընկած նախնադարյան ընդարձակ բնակավայրը, Սպանդարյան և Վահրամաբերդ գյուղերում գտնվող ուրարտական սեպագիր արձանագրությունների պարունակող տարածքները, Հայկաձորի քարանձավները և այլն:

Անի մայրաքաղաքին մոտ լինելու հանգամանքը և դիտարկման լայն տեսարան ապահովելու հնարավորության առկայությունը կարող է նպաստել մարզում ևս մի մասսայական և հետաքրքիր ուղղության զարգացմանը:

Անիի ավերակները դիտարկելու համար ամենահարմար տարածքները և ամենամոտ կետերը գտնվում են Հիրակի մարզում: Ուղղությունն այսօր իսկ մեծ հետաքրքրություն է ներկայացնում, հատկապես՝ Հայաստան ժամանած սփյուռքահայերի շրջանում:

Ճիշտ մատուցման պարագայում այս ուղղությունը կարող է շատ հետաքրքիր լինել ինչպես արտասահմանցիներին, այնպես էլ ներքին զբոսաշրջիկներին:

Պատմաճարտարապետական զբոսաշրջության ուղղությունը կարող է նաև հիմք հանդիսանալ՝ հոգևոր և ուխտագնացային զբոսաշրջության զարգացման համար:



3.4. Ակտիվ գրոսաշրջություն

Ակտիվ գրոսաշրջությունն այսօր մեծ թափ և մասսայականություն հավաքող ուղղություն է: Մեգապոլիսների և քաղաքային բնակչության կտրուկ աճը, բնության մասսայական աղտոտումն ու եղանակային գլոբալ փոփոխությունները բերել են նրան, որ այս ուղղության նկատմամբ պահանջարկը շարունակական աճ է դրսևորում վերջին տասնամյակում և ունի հետագա բուռն զարգացման խորը միտում:

Առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ քաղաքային բնակչությունը, որը հանդիսանում է ուղղության պրոդուկտների հիմնական սպառողը, ունի մեծ վճարունակություն:

Սա նշանակում է, որ ակտիվ գրոսաշրջության ուղղության որակյալ զարգացման պարագայում՝ հնարավոր է ունենալ ֆինանսական միջոցների զգալի և կայուն ներհոսք, ինչպես նաև ներդրումային ծրագրերի արագ հետզնում:

Ստորև ներկայացված են ակտիվ գրոսաշրջության հիմնական ուղղությունները.

3.4.1. Գյուղատնտեսական գրոսաշրջություն (Ագրոտուրիզմ)

Այս ուղղությունը բավականին լայն է և բազմազան: Այն իր մեջ ներառում է փոխկապակցված մի քանի ենթաուղղություններ՝ էկոգրոսաշրջություն, գյուղական գրոսաշրջություն, էթնոգրոսաշրջություն, գեոգրոսաշրջություն, ճանապարհորդություն քաղաքից դուրս:

Ինչպես նշվեց, գյուղատնտեսական գրոսաշրջության ուղղությունն այսօր ամենամասսայականներից մեկն է աշխարհում: Մարդիկ, հատկապես քաղաքային բնակիչները, պատրաստ են վճարել նրա համար, որպեսզի որոշ ժամանակ ապրեն գյուղական միջավայրում, ճաշակեն բնական ծագմամբ և էկոլոգիապես մաքուր սնունդ, գտնվեն վայրի բնության մեջ, իրենց ուժերով բացահայտեն նոր, դժվարամատչելի կամ հեռավոր վայրեր:

Շատ գրոսաշրջիկների համար հետաքրքիր է, թե ինչպես են կթում կովին, ինչպես են կերակրում ոչխարներին, այծերին, ինչպես են պայտում ձիերին, ինչպես են վարուցանք ու բերքահավաք իրականացնում, ինչպես են գյուղատնտեսական մթերքներ պատրաստում, ինչ հետաքրքիր վայրեր կան գյուղական բնակավայրերին կից տարածքներում և այլն:

Ամբողջ աշխարհում գյուղատնտեսական գրոսաշրջությունը բազմաթիվ մեծ ու փոքր գյուղերի, ֆերմաների, ագարակների, գյուղացիական փոքր տնտեսությունների ծաղկման գրավականն է: Ուղղությունն արդեն մեծ զարգացում և ավանդույթներ ունի Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում և սկսում է թափ հավաքել նաև Լատինական Ամերիկայում և Ասիայում:

Գյուղատնտեսական գրոսաշրջության հիմքում այսօր ընկած են բազմաթիվ փոխկապակցված ու մեծ մասսայականություն վայելող ծառայություններ, որոնցից կարելի է նշել.

- Գյուղատնտեսական աշխատանքներին (վարուցանք, բերքահավաք, կենդանիների խնամք, կիթ, գյումթերքների վերամշակում) ակտիվ մասնակցության ապահովում: Ընդ որում, գրոսաշրջիկների շրջանում շատ հարգի են այժաբուժական ֆերմաները՝ դրանց արտադրանքի դեղիկատեսային բնույթի շնորհիվ;

- Էկոլոգիապես մաքուր տարածքներում ակտիվ հանգստի ապահովում, որը համակցվում է գյուղական առօրյայի և շրջակա տեսարժան վայրերի, բնության անկյունների այցելությունների հետ;

- Գյուղական տանը և/կամ գյուղի/ֆերմայի տարածքում գտնվող փոքր հյուրատներում՝ ապրելու հնարավորության տրամադրում և գյուղի լիարժեք բնակչի լիարժեք կյանքով ապրելու հնարավորության ստեղծում;

- Էթնիկ տարրեր պարունակող ավանդույթներին, գործընթացներին, միջոցառումներին մասնակցելու հնարավորության ստեղծում: Դա ժողովրդական արհեստների, մշակույթի, կենցաղային ավանդույթների, ծեսերի, խոհանոցի ու ճաշատեսակների, թեմատիկ՝ էթնո - տոների, փառատոների հետ լիարժեք կերպով ծանոթանալու, դրանց մասնակցելու ու դրանց հետ անմիջական առնչություն ունենալու հնարավորության ստեղծումն է;

- Մեծ թափ է սկսել հավաքել մեղվաբուծական ուղղությունը, երբ զբոսաշրջիկները մասնակցություն են ունենում մեղվաբուծության գործընթացներին, համտեսում և/կամ գնում են էկոլոգիապես մաքուր մեղրն ու բուժիչ հատկություններ ունեցող մեղվամթերքները;

- Մյուս մասսայականություն հավաքող ուղղությունը՝ դա, ձիթագործության մեջ, զբոսաշրջիկների մասնակցությունն է: Իր բնույթով և արդյունքներով՝ այս ուղղությունը նույնպես նման է մեղվաբուծությանը:

Նախորդիվ թվարկվեցին միայն «մակերևույթին գտնվող» ծառայությունների մի մասը միայն, մինչդեռ գյուղատնտեսական զբոսաշրջության ուղղությունն աչքի է ընկնում իր բազմազանությամբ, լայն հնարավորություններով և ստեղծագործելու համար՝ անսպառ դաշտով:

Ուղղության զարգացման համար մարզն այսօր ունի բոլոր նախադրյալները: Այստեղ առկա են մի քանի կլիմայական գոտիներ, ինչն ապահովում է մշակվող և առաջարկվող սննդային կուլտուրաների բազմազանություն, առկա են դժվարամատչելի ձեռակերտ և անձեռակերտ հուշարձաններ, մարզում առկա են էկոլոգիապես մաքուր բազմաթիվ ալպիական մարգագետիններ, բնության գեղեցիկ անկյուններ, զարգացած գյուղական ենթակառուցվածքներ: Գյուղերից շատերում պահպանվել են ազգային մշակույթի բազմազան տարրեր:

Ուղղության զարգացմանը նպաստող առաջնային միջոցառումներից կարելի է նշել՝ առավելություն հանդիսացող տարրերի հավաքագրումը, բացահայտումը, խմբավորումը, նույնականացումը և ապրանքայնացումը, տիպային բիզնես – մոդելների մշակումը և արմատավորումը, սպասարկման և հիգիենայիկ ստանդարտների ներդրումը, օտար լեզուների բազային իմացության հիմնախնդրի լուծումը, գնագոյացման ուղենիշների մշակումն ու ներդրումը, նշված և այլ հիմնական հարցերի վերաբերյալ՝ ուսուցման, թրեյնինգների, իրազեկման և որակի վերահսկման միջոցառումների մշտական կազմակերպումը:

3.4.2. Շուրջտարյա արկածային և սպորտային զբոսաշրջություն

Շիրակի մարզը հարմար է ինչպես ամառային, այնպես էլ ձմեռային զբոսաշրջության զարգացման համար: Սա կարևորագույն հանգամանք է, քանի որ

Հայաստանի զբոսաշրջային ոլորտին բնորոշ է խիստ ընդգծված սեզոնայնությունը, երբ ձմռան ամիսներին զբոսաշրջիկների հոսքը կտրուկ նվազում է:

Սեզոնայնության հիմնախնդրի հաղթահարումը թույլ կտա մեծացնել ինչպես մարզի (Հանրապետության) եկամուտները, այնպես էլ կմեծացնի զբոսաշրջության ոլորտի ներդրումային գրավչությունը՝ ապահովելով դրանց ավելի արագ վերադարձը:



Ձմեռային զբոսաշրջության զարգացման առումով մարզն ունի մի քանի անվիճելի առավելություններ, որոնցից հիմնականներն են. սեզոնին՝ ձյան մշտական առկայությունը, արևոտ օրերի մեծ քանակը ձմռան ամիսներին, ինչը մեղմում է ցրտի գործոնը, հարմար բնական լանդշաֆտները՝ ձմեռային մարզաձևերի զարգացման համար, ճանապարհա – տրանսպորտային կայացած ենթակառուցվածքներն ու աշխարհագրական բարենպաստ դիրքը:

Ինչպես նշվեց՝ մարզում առկա են բազում բարձրադիր, դժվարամատչելի և կուսական վայրեր, բնական հուշարձաններ, ալպիական գոտիներ: Դժվարամատչելի շատ վայրերում առկա են հեթանոսական ժամանակաշրջանին վերաբերվող հուշարձաններ, կիկլոպյան ամրոցներ, քարանձավներ ու կիրճեր: Արշավների և ճամբարային հանգստի կազմակերպումն այս ուղղություններով կարող է մեծ հետաքրքրություն և պահանջարկ ապահովել զբոսաշրջիկների շրջանում:



Վերջերս, Շիրակի մարզի Աշոցքի դահուկավազքի կենտրոնում Եվրոպական միության պատվիրակության և Հայաստանի դահուկային սպորտի, ֆեդերացիայի նախաձեռնությամբ, տեղի ունեցավ Հայաստանում առաջին դահուկային փառատոնը: Սա կարևոր նախադրյալ է մարզում սպորտային զբոսաշրջության զարգացման համար:

Ենթաուղղության զարգացման կարևորագույն բաղադրիչ կարող է հանդիսանալ նաև արշավների կազմակերպման կուլտուրայի և համապատասխան բիզնես – մոդելների ստեղծումը: Մարզն ունի մեծ հնարավորություններ և թաքնված շատ մեծ պոտենցիալ այս հարցում: Արշավներ կարելի է կազմակերպել

դեպի «Թռչկան» ջրվեժ, որը հյուսիսային Հայաստանի բնության ամենագեղեցիկ հրաշալիքներից մեկն է, Արփի լճի ուղղությամբ, արշավներ դեպի Ախուրյանի կիրճի Ջրածոր - Անի քարանձավներն ու քարանձավային այլ բնակավայրերը և այլն: Ընդհանուր առմամբ, կարելի է մշակել մի քանի տասնյակ արշավային ինքնուրույն երթուղիներ:

Արփի լիճ

Ինչպես նշվեց, շուրջտարյա արկածային և սպորտային զբոսաշրջության զարգացման համար լավ խարիսխ կարող է հանդիսանալ «Արփի լիճ» ազգային պարկը, որտեղ դրա համար կան բոլոր նախադրյալները:

«Արփի լիճ» ազգային պարկի նպատակն է պահպանել պարկի տարածքներում ներկայացված լանդշաֆտների, էկոհամակարգերի, ֆլորայի և ֆաունայի բազմազանությունը, աջակցել պահպանման գոտում գտնվող համայնքների տնտեսական զարգացմանը և ստեղծել հնարավորություններ բնակչության կենսամակարդակի բարձրացման համար:

Այստեղ կարող են մատուցվել սպորտային զբոսաշրջության հետ առնչվող հետևյալ ծառայությունները.

1. դահուկավազք,
2. ձկնորսություն,
3. նավակների վարձակալություն,
4. հրաձգային սպորտ,
5. հեծանվային երթուղիների ստեղծում, որը հնարավորություն կտա զարգացնել սիրողական հեծանվային մարզաձևերը (այդ թվում նաև՝ լեռնահեծանվային սպորտը), ստեղծել համապատասխան պայմաններ հեծանվային զբոսաշրջության զարգացման համար,
6. քայլարշավային երթուղիների ստեղծում,
7. ծիավարում՝ մուսք գործելով վայրի բնություն՝ ձիերի ուղեկցմամբ,
8. փեյնթ բոլ (Paint Ball) –ի (խմբային տեխնիկական սպորտաձև՝ գունավոր հեղուկ պարունակող գնդակների կիրառմամբ) զարգացում,
9. քեմփինգ փլեյսերի (Camping place) (տարածք, որտեղ մարդիկ կրող են գիշերել վրանների մեջ) ստեղծում,
10. թյուբինգ (Tubing)-ի (սահում ռետինե սահնակների միջոցով) զարգացում,
11. չմուշկների, սահնակների և դահուկների վարձակալություն,
12. շոգեբաղնիքների՝ (փոքր շինություն, որտեղ մարդիկ, գոլորշու և բարձր ջերմաստիճանի պայմաններում, քրտնելով վերականգնում են իրենց էներգիան) կառուցում,
13. թռչնադիտարկման (birdwatching) ուղղության և ենթակառուցվածքների ստեղծում: Այս նախաձեռնության նպատակն է խրախուսել հնարավորինս շատ մարդկանց հանգստյան օրերին գնալ թռչնադիտարկման,
14. արշավներ դեպի «Արփի լիճ» ազգային պարկ, որտեղ առկա է յուրահատուկ բնություն և կեսաբազմազանություն,

Արփի լճի ուղղության զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք առաջնահերթ միջոցառումներ, որոնք կապահովեն զբոսաշրջիկների կայուն

հոսք, ինչպես նաև՝ խարսխային դերակատարություն կունենան նոր, ավելի մասշտաբային ներդրումների ներգրավման համար, դրանք են.

ա) անհրաժեշտ ենթակառուցվածքների, ճանապարհների բարեկարգում կամ ստեղծում;

բ) լճին հարակից տարածքներում հյուրանոցների և հյուրատների կառուցում, ներառյալ՝ հարակից գյուղերի տարածքում՝ «ցրված հյուրանոցների» կառուցումը, երբ ընդհանուր կոմպլեքսի մաս կազմող մասնաշենքերը ցրված են բնակավայրում: Սա կարող է նպաստել նաև բնակավարի ներքին համաչափ զարգացմանը;

գ) բնակավայրերում՝ բնակիչների և զբոսաշրջիկների համար ժամանցի վայրերի կազմակերպում, ինչպես նաև՝ էթնո – տարրերի ապրանքայնացում՝ ժամանցի վայրերի տեսքով;

դ) թռչնադիտարկման համար հարթակի կառուցում և հեռադիտարկման հնարավորության ստեղծում;

ե) հետիոտնային և հեծանվային արահետների կառուցում, հեծանիվների վարձույթի կազմակերպում;

զ) դահուկավազքի երթուղու կառուցում, սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկայի ձեռքբերում, դահուկների և չմուշկների վարձույթի կետերի կազմակերպում;

է) նավակների վարձույթի կետի կազմակերպում;

ը) ձիերի պահման և խնամքի համար՝ ենթակառուցվածքի ստեղծում ;

թ) Փրկարարական ծառայության և բուժկետի կազմակերպում, անհրաժեշտ տեխնիկական աջակցություն;

ժ) Զբոսաշրջիկների իրազեկվածությունը մեծացնելու համար համապատասխան կայքի, ինֆորմացիոն պրոդուկտների, հավելվածների մշակում:

Արագած լեռ

Չնայած այն հանգամանքին, որ Արագած լեռը մասամբ գտնվում է մարզի տարածքում և հանդիսանում է նրա խորհրդանիշներից մեկը, զբոսաշրջությունն այս ուղղությամբ շատ թույլ է զարգացած: Այս երևույթն ավելի քան տարօրինակ է, քանի որ նախ՝ զբոսաշրջիկների մի ստվար մասը միշտ առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերում լեռան նկատմամբ, մյուս կողմից էլ՝ Արագածն ունի բազմաթիվ գեղատեսիլ անկյուններ, այստեղ առկա են հնամյա հուշանձաններ, քարանձավներ, լճեր, մի քանի կլիմայական գոտիներ:

Ակնհայտ է, որ նշված ուղղության արհեստավարժ և կայուն զարգացումը կապվում է մի շարք յուրահատկությունների և լրացուցիչ դժվարությունների հետ, սակայն համապատասխան ծրագրերի ու միջոցառումների համակարգի, պրոդուկտների և ուղղությունների համակարգման, բոլոր խանգարիչ գործոնների հիմնավոր հաղթահարման, ինչպես նաև՝ համապատասխան ենթակառուցվածքների՝ գոնե նվազագույն մակարդակով ստեղծման պարագայում՝ ուղղության զարգացումը կարող է մեծ թափ ստանալ և կարող է մշտական էական հոսքեր ապահովել մարզի համար:

Այսպիսով, արկածային և սպորտային զբոսաշրջության ուղղության զարգացման համար անհրաժեշտ է.

- մշակել յուրաքանչյուր ենթաուղղության մասսայականացվելիք պրոդուկտներն ու տարրերը,
- մշակել ուղղություններից յուրաքանչյուրի տիպային բիզնես մոդելը և գործարարներին (տեղական բնակչությանը) ծանոթացնել դրա հետ, ներգրավել ներդրումներ՝ բիզնես մոդելների իրականացման համար;
- կրթական, ինֆորմացիոն և բացատրական լայն աշխատանքներ տանել տեղական բնակչության շրջանում և նրանց մասսայականորեն ընդգրկել այս գործառույթներում;
- Կազմակերպել կամ վերանորոգել անհրաժեշտ ենթակառուցվածքները:

IV ԶԲԱՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

4.1. Գյումրի քաղաքի ճարտարապետական տեսքն ու դրա պաշտպանությունը

Քաղաքի ճարտարապետական տեսքի պաշտպանության, ինչպես նաև դրա ամբողջականացման գործընթացի նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել մշտական և արհեստավարժ բնույթի կենտրոնացված վերահսկողություն: Հարցն ունի մի քանի հարթություն.

ա) Անհրաժեշտ է միասնական ճարտարապետական վերահսկողության և միասնական ճարտարապետական փիլիսոփայության կոնցեպտի մեջ ընդգրկել ոչ միայն Հին Գյումրին, այլ նաև՝ ողջ Գյումրի քաղաքը: Խոսքը վերաբերվում է ոչ միայն առավելապես՝ խորհրդային ժամանակներին վերաբերվող արժեքավոր այլ շինություններին, որոնք գտնվում են Հին Գյումրու հատվածից դուրս, այլ նաև՝ քաղաքի ողջ մասերի ընդհանուր բարեկարգմանն ու նորացմանը, դրանք միասնական տրամաբանության բերելուն:

Խոսքը գնում է այն մասին, որ նույնիսկ պատմական արժեք չունեցող և անհրապույր կառույցներից, միատիպ շենքերից կազմված բնակելի թաղամասերի համար անհրաժեշտ է գտնել համապատասխան դիզայնի և ինտեգրացիոն լուծումներ (այս մոտեցումն անհրաժեշտ է տարածել նաև մարզի մյուս քաղաքների և բնակավայրերի վրա):

բ) Անհրաժեշտ է կարգավորել արտաքին գովազդը, քանի որ այն ունակ է պատնեշելու և աղճատելու քաղաքի տեսքը: Խոսքը, հատկապես, վերաբերվում է Գյումրի քաղաքի կենտրոնին և զբոսաշրջիկների համար հետաքրքրություն ներկայացնող վայրերին: Հարցի կարևորությունն այնքան նշանակալի է, որ նույնիսկ պատմա – մշակութային որևէ լուրջ ժառանգություն չունեցող հսկայական թվով քաղաքներ վաղուց արդեն խիստ կերպով վերահսկողության տակ են վերցրել և ստանդարտիզացրել այս հարցը: Ինչ վերաբերվում է նշանակալի պատմական արժեքներ ունեցող քաղաքներին, ապա դրանցից շատերում (Հռոմ, Ֆլորենցիա, Աթենք, Դուբրովնիկ, Սպլիթ, Պրահա, Սևիլյա, Բարի, Ռիգա, Տալլինն և այլն), ամբողջական թաղամասերում և տարածքներում՝ ընդհանրապես արգելված է որևէ արտաքին գովազդի տեղադրումը:

զ) Պատմական և ճարտարապետական արժեք ներկայացնող շենքերում եղած բնակարանների, առևտրային և հասարակական նշանակության օբյեկտների վերաբերյալ պետք է մշակել դրանցում փոփոխություններ կատարելու հստակ կանոններ: Անհրաժեշտ է իրականացնել դրանց պահպանման գումարների տրամադրման հնարավորությունների և մեխանիզմների ուսումնասիրությունը;

դ) Անհրաժեշտ է, որպեսզի Գյումրի քաղաքն ունենա կենտրոնացված դիզայներական խորհուրդ, որտեղ կմտնեն մասնագետներ ոչ միայն տեղից, այլ նաև Երևանից և արտերկրից:

4.2. Հյուրանոցային փոքր ֆոնդ

Մարզում առկա հյուրանոցային ֆոնդը (սենյակային ֆոնդը) կազմում է 668 մահճակալ, որոնցից 526-ը բաժին է ընկնում հյուրանոցներին, իսկ 142-ը՝ հյուրատներին:

Սա շատ քիչ է և չի կարող սպասարկել մեծ հոսքեր, հատկապես, եթե նպատակ է դրվում հասնել նրան, որ մարզ ժամանող զբոսաշրջիկների գոնե մի մասը գիշերի այստեղ, այլ ոչ թե շտապի Երևան, ինչպես այսօր հաճախ է տեղի ունենում:



Հարկ է նշել նաև, որ մարզում քիչ է էժան հյուրատների՝ հոսթելների և հանրակացարանային տիպի հյուրանոցների քանակը, մինչդեռ դրանց առկայությունը լուրջ նպաստող հանգամանք կարող է լինել զբոսաշրջիկի կողմից գիշերակացի որոշման կայացման համար:

Անհրաժեշտ է շուտափույթ ձեռնամուխ լինել ոլորտում նոր հյուրանոցների և հյուրատների բացման խրախուսման գործընթացին, այդ թվում նաև՝ գյուղական վայրերում: Սա կարող է լինել ինչպես համայնքային սեփականություն հանդիսացող և ոչ լիարժեք օգտագործվող տարածքների վերապրոֆիլավորման, այնպես էլ նոր միավորների կառուցման հաշվին: ՊՄԳ մոտեցումները, հատկապես այս սեգմենտում, կարող են բավականաչափ արդյունավետ լինել:



Մարզում թույլ է զարգացած նաև մասնավոր բնակելի տարածքների՝ վարձով տրամադրվող սեգմենտը և սա այն դեպքում, երբ, օրինակ՝ Գյումրի քաղաքում շատ

են թափուր բնակարանները: Նույնը կարելի է ասել նաև գյուղական բնակավայրերի մասին, որտեղ բնակիչները նույնպես կարող են գիշերակացի համեմատաբար որակյալ տարածք տրամադրել զբոսաշրջիկներին: Սեփականատերերն, այս առումով, ունեն ոչ բավարար իրազեկվածություն, անվճռականություն, պրակտիկ գիտելիքների ու գործերի վարման կուլտուրայի պակաս, ինչպես նաև նման բիզնեսի վարման անվտանգության հետ կապված մտահոգություններ: Պետք է նաև խթանել հյուրատների (B&B) ստեղծումը գյուղերում՝ գյուղացիների անմիջական ներգրավմամբ:

Այս սեգմենտին անհրաժեշտ է առաջարկել պատրաստի բիզնես մոդելներ և գիտելիքներ, ինչպես նաև որոշակիորեն համակարգել և ստանդարտիզացնել այն՝ օրինակ, ներգրավելով արդեն ստանդարտիզացված մասնակիցներին՝ տարածքների առաջարկի միասնական ցանկերի մեջ:

Անհրաժեշտ է խրախուսել կառավարիչ ընկերությունների առաջացումը և մուտքը հատկապես վարձով տրվող բնակելի մասնավոր տարածքների հատվածում: Դրանք սեփականատերերին կազատեն մի շարք գլխացավանքներից, ինչպես նաև կապահովեն սպասարկման համապատասխան որակ: Այս (կառավարման) բիզնեսը հաջողությամբ կարող են վարել նաև մարզի առաջատար զբոսաշրջային ընկերությունները:

Բիզնես մոդելի մշակման և, մասնավորին, դրա ներկայացման գործընթացում՝ անհրաժեշտ է բացահայտել այն հիմնարար գաղափարները և կանխատեսվող հաշվարկները, որոնք, օրինակ, «Հին Գյումրիի» տարածքի ամբողջական վերանորոգման, ինչպես նաև՝ Անիի դիտակետի բացման պարագայում, էականորեն կավելացնեն զբոսաշրջիկների քանակը և վերջիններս կուզենան մարզում մնալ մեկ օրից ավելի:

Ցանկալի այս իրողության կայացմանը կարող է նպաստել նաև այն, որ զուգահեռաբար նախատեսվում են նաև զբոսաշրջային հոսքերի խրախուսմանն ուղղված այլ ուղղությունների և հետաքրքրություն ներկայացնող այլ օբյեկտների զարգացումը, որոնց նկարագրությունը, մասնավորապես, տեղ է գտել սույն հայեցակարգում:

Այսպիսով, գիշերակացի այսօր առկա փոքր ֆոնդը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ ոչ միայն դասական զբոսաշրջության զարգացման, այլև մարզում գիտական, սոցիալ-մշակութային, քաղաքական, մարզական և գործարար բնույթի խոշոր միջոցառումների անցկացման համար՝ մարզին և նրա բնակիչներին գրկելով լրացուցիչ եկամտի աղբյուրներից:

4.3. Ծառայությունների մատուցման ցածր մակարդակ

Այս հիմնախնդիրը բնորոշ է ոչ միայն Շիրակի մարզին, սակայն այն մեծապես առկա է մարզում և, այստեղ գործող զբոսաշրջային օպերատորների հավաստմամբ, դա մեծագույն խոչընդոտ կարող է հանդիսանալ մասշտաբային զբոսաշրջության կազմակերպման համար:

Խնդիրն ունի ոչ միայն պրակտիկ, այլ նաև՝ խորքային - մեթոդաբանական բաղադրիչներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Զբոսաշրջության հետ անմիջական առնչություն ունեցող օբյեկտների և ծառայություններ մատուցող ընկերությունների (հյուրանոցներ, ռեստորաններ, սրճարաններ, տրանսպորտային ծառայություններ) սեփականատերերի մեծ մասը ոչ բավարար հոգածություն ու մտահոգություն է դրսևորում՝ սպասարկող անձնակազմի կողմից սպասարկման ոլորտին վերաբերվող և անհրաժեշտ մակարդակի մասնագիտական գիտելիքների ստացման և կիրառման ուղղությամբ, ինչպես նաև առկա հիմնական միջոցների ներգրավմամբ՝ ծառայությունների մատուցման պատշաճ որակի մշտական ապահովման գործում:
 Լուրջ հիմնախնդիրներ են առկա նաև սանիտարա – հիգիենիկ նորմերի պահպանման հարցերում:
2. Սպասարկման ոլորտին առնչվող շատ մասնագիտությունների գծով մարզում բացակայում են համապատասխան կրթական հաստատությունները և վերապատրաստման որակյալ դասընթացները: Նույնիսկ ցանկության դեպքում՝ օբյեկտի սեփականատերը հաճախ հնարավորություն չունի իր աշխատողներին ուղարկելու խորքային ուսուցման կամ վերապատրաստման դասընթացների և հաճախ վերապատրաստումն իրականացվում է միայն ընկերությունների ներսում՝ սեփական չափանիշներով:
 Պետք է հասնել նրան, որպեսզի ոլորտի սպասարկման գործընթացում ընդգրկված ցանկացած մասնակից ունենա համապատասխան մասնագիտական որակավորում և սերտիֆիկատ (կամ՝ որակավորումը հաստատող փաստաթուղթ):
 Անկասկած, մասնագիտական կրթություն կարելի է և պետք է ապահովել մարզում առկա կրթական հաստատությունների բազայի վրա, սակայն գիտելիքների որակի իրական և ավելի ճշգրիտ վերահսկման համար անհրաժեշտ է, որպեսզի դրանից հետո, սերտիֆիկացիոն քննությունները հանձնվեն միայն մեկ կենտրոնում, որտեղ էլ կտրամադրվի սերտիֆիկատը (փաստաթուղթ)՝ հանձնողի գիտելիքների մակարդակը ստուգելուց հետո: Այս հանգամանքն ավելի «կզգաստացնի» կրթական հաստատություններին՝ անհրաժեշտ կրթական որակ ապահովելու գործում:
3. Զբոսաշրջության ոլորտում կարևոր նշանակություն ունեն բարձր որակավորում ունեցող, օտար լեզուներին տիրապետող գիդ-զբոսավարները: Նախատեսվում է կանոնակարգել այս ոլորտը, որպեսզի ոչ բավարար գիտելիքներ ունեցող անձինք ներկայացված չլինեն պրոֆեսիոնալ ծառայությունների տրամադրման այս ոլորտում:
4. Անհրաժեշտ է պատրաստել նաև արկածային և սպորտային զբոսաշրջության ոլորտում աշխատող ուղեկցող – զբոսավարների, որոնք լավ գիտեն հեռու և դժվարամատչելի վայրերի յուրահատկությունները, վտանգները, ճանապարհները, զգուշավորության և անվտանգության կանոնները: Այս մասնագետներին կարելի է պատրաստել նաև հեռավոր բնակավայրերի բնակիչների կազմից՝ կազմակերպելով լրացուցիչ դասընթացներ և ներկայացնելով համապատասխան պահանջներ նրանց նկատմամբ: Սա նաև կնպաստի հեռու գյուղերում նոր աշխատատեղերի ստեղծմանը:

5. Մարզի տարածքի ենթակառուցվածքները, սպասարկման ներքին կառուցվածքները, տրանսպորտը հարմարեցված չեն հաշմանդամների և սահմանափակ հնարավորություններով մարդկան սպասարկման համար: Խոսքը ոչ միայն արդեն վաղուց գործող այլ նաև՝ նոր կառուցվող և նոր բացվող հաստատությունների մասին է, որտեղ ավելի հեշտորեն կարելի էր լուծել այս հարցը:

Նշված սեգմենտի վիճակը, բացի նրանից, որ այստեղ հիմնավորապես խախտվում են քաղաքացիների իրավունքները, աշխարհում այսօր հանդիսանում է նաև չափորոշիչ, կամ՝ «լակմուսային թուղթ»՝ զբոսաշրջության մակարդակի գնահատման համար: Անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական և վարչարարական պահանջներ ներկայացնել տնտեսվարողներին, ինչպես նաև՝ ֆինանսական պատասխանատվության ենթարկել հարցի նկատմամբ արհամարհական վերաբերմունք ցուցաբերողներին:

4.4. Շերտային ուղղվածություն ունեցող և պատրաստի բիզնես մոդելների բացակայություն.

Հայեցակարգում նշված յուրաքանչյուր ուղղության զարգացման համար անհրաժեշտ է մշակել դրա զարգացման հնարավորինս իրատեսական բիզնես մոդելը, որը բավարար եկամտաբերություն կարող է ապահովել ինչպես ներդրողներին, այնպես էլ՝ մարզին: Ուղղություններից յուրաքանչյուրի համար կիրառելի է Պետություն - մասնավոր գործընկերության (ՊՄԳ) մոդելը՝ սեփական (մարզի) յուրահատկություններով:

Չնայած որ նշված գործընթացում պետությունը հանդիսանում է հիմնական շարժիչ ուժ և արագացուցիչ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նաև, որ այդ գործընթացն իրականացվի շահագրգիռ բոլոր ուժերի և մասնակիցների կարծիքների և ցանկությունների քննարկմամբ, դրանց հավասարակշռված կիրառմամբ, մասնակիցների ռեսուրսների և գիտելիքների պոտենցիալի առավելագույն և փոխշահավետ օգտագործմամբ:

ՀՀ Շիրակի մարզպետարանի և «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ –ի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր, որի շրջանակում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն մարզի տարածքում իրականացնելու է անվճար բիզնես դասընթացներ: 2017թվականի սեպտեմբերի 26-ին և 27-ին Շիրակի մարզում անցկացվել են հյուրանոցային բիզնեսին վերաբերող անվճար դասընթացներ: Լավագույն արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է, որպեսզի այս և նմանօրինակ դասընթացները շարունակական լինեն, իրականացվեն նաև այլ որակյալ կառույցների հետ, ինչպես նաև ներառեն հայեցակարգում նշված բոլոր ուղղություններն ու հիմնահարցերը:

4.5. Զբոսաշրջային ուղղություններին և օբյեկտներին, տրանսպորտի գրաֆիկին վերաբերվող ինֆորմացիայի համակարգվածության և տեղայնացվածության, ինչպես նաև տրամադրման հստակ մեխանիզմների բացակայություն

Հայտնի է, որ զբոսաշրջության զարգացման գործում մեծ է ինֆորմացիայի ճիշտ համակարգման և դրա որակյալ տրամադրման դերը: Ասվածը վերաբերվում է սույն հայեցակարգում նշված ուղղություններից յուրաքանչյուրին:

Զբոսաշրջիկը պետք է հնարավորություն ունենա արագ և մատչելի կերպով ստանալու իրեն հետաքրքրող ուղղության, սեզոնների և օբյեկտի վերաբերյալ տեղեկատվություն՝ իրեն հասկանալի լեզվով:

2017 թ. դեկտեմբերից, ՀՀ Զբոսաշրջության պետական կոմիտեի աջակցությամբ, Գյումրիում գործում է զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը, որի նպատակն է հավաքագրել և ստեղծել տվյալների բազա՝ զբոսաշրջային ռեսուրսների վերաբերյալ, վարել վիճակագրություն, անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել և ուղղորդել իրենց դիմող զբոսաշրջիկներին:

Անշուշտ, սա կարևոր քայլ և որակյալ օղակ է՝ մարզում զբոսաշրջության ոլորտի տեղեկատվական ապահովման գործում: Միաժամանակ, տեղեկատվական դաշտը, ինչպես նաև՝ ինֆորմացիայի տրամադրման ուղիները ժամանակակից աշխարհում, բազմաշերտ և բազմաբնույթ են՝ ուղղված զբոսաշրջիկի համար առավելագույնս հարմարավետ միջավայրի ստեղծմանը:

Ինֆորմացիայի ստացումը պետք է հասանելի լինի ինչպես վաղօրոք, այնպես էլ տեղում: Ընդ որում, այն պետք է ընդգրկի ոչ միայն հայտնի և մասսայական վայրերը, այլ սպառիչ տեղեկություններ տա նաև մարզում առկա և պոտենցիալ հետաքրքրություն ներկայացնող ցանկացած այլ, նույնիսկ դժվարամատչելի վայրերում գտնվող օբյեկտների վերաբերյալ:

Օրինակ, պատմամշակութային զբոսաշրջության զարգացման ոլորտում, ցանկացած հուշարձան և կոթող, առանց դրան հարող և սպասարկման հարմարավետություն ապահովող ենթակառուցվածքների, ինչպես նաև՝ առանց մատչելի և հանգամանալից տեղեկատվության տարրի՝ կարող է կտրուկ կերպով անհետաքրքիր կամ անհասկանալի դառնալ զբոսաշրջիկի համար:

Նույնը կարելի է ասել թանգարանների մասին, որոնց՝ վիրտուալ ցուցադրման համար տեխնիկական միջոցներով հագեցվածությունն ու օտար լեզվով ինֆորմացիայի տրամադրման ժամանակակից հնարավորությունների օգտագործումը կարող են թույլ են տալ էականորեն ավելացնել թանգարան այցելող զբոսաշրջիկների թիվը, ինչպես նաև՝ շեշտակիորեն մեծացնել այդ ինֆորմացիայի ճիշտ և դրական ընկալման հնարավորությունները: Սա նաև երկրի պրոպագանդայի անուղղակի ձև է:

Անհրաժեշտ է նաև, որ զբոսաշրջիկն ի սկզբանե տեղյակ լինի կոնկրետ օբյեկտի վերաբերյալ ինֆորմացիայի ստացման միասնական աղբյուրներին և մեթոդներին, հնարավորություն ունենա տեղում ստանալու իրեն հետաքրքրող տեղեկատվությունը, այդ թվում նաև ինֆորմացիոն և առցանց գիդ-հավելվածների միջոցով:

Իրազեկման խնդիրը մարզում սուր է նույնիսկ այն տարածքներում, որտեղ այսօր իսկ նկատվում է ներդրումային որոշակի ակտիվություն և զբոսաշրջիկների կայուն հոսք, մասնավորապես, Գյումրիում:

Կարևորագույն հարց է հանդիսանում հայերենին զուգահեռ, օտար լեզուներով, փողոցների ցուցանակների և արտաքին ուղեցույցների տեղադրումը ոչ միայն «Կումայրի» արգելոցի, այլ նաև՝ ողջ Գյումրի քաղաքի տարածքում, քաղաք մտնող և քաղաքից դուրս տանող գոտիներում: Զբոսաշրջային օպերատորների, ինչպես նաև Գյումրի քաղաքի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի հավաստմամբ, սրանից շատ են բողոքում քաղաք ժամանած զբոսաշրջիկները: Ասվածը վերաբերվում է նաև ողջ մարզի տարածքում, այդ թվում նաև օտար լեզվի առկայությամբ, արտաքին ուղեցույցների բացակայությամբ:

Առանձի բողոքի առարկա են դառնում նաև՝ հասարակական տրանսպորտի ցուցանակներում օտար լեզվով գրառումների, ճանապարհա – տրանսպորտային շատ միջազգային նշանների բացակայությունը, ինչպես նաև՝ Գյումրի քաղաքի որոշ հրապարակներում ու խաչմերուկներում՝ երթևեկության կանոնների ոչ հստակ կարգավորումը:

Ինֆորմացիայի որակյալ և խորքային տրամադրման ձև է նաև, այսպես կոչված, ֆիլմային մեթոդը, երբ ամբողջական բնույթի, բայց սեղմ հոլովակի միջոցով՝ զբոսաշրջիկը խարսխային հիմնական ինֆորմացիա է ստանում իրեն հետաքրքրող թեմայի մասին, իսկ հետո ավելի մանրամասնորեն սկսում է ուսումնասիրել դրա առավել գրավիչ տարրերը: Դրանք կարող են լինել մարզին և/կամ տեղի զբոսաշրջային ուղղություններին վերաբերվող վառ ֆիլմեր և հոլովակներ, որոնք կարող են հեռարձակվել միջազգային հայտնի հեռուստաալիքներով և կայքերով: Բացի այդ, նշված ֆիլմերն ու հոլովակները, մոնիտորների միջոցով, կարող են մշտապես ցուցադրվել մարզի գլխավոր տրանսպորտային հանգույցներում և, առաջին հերթին, «Շիրակ» օդանավակայանում:

Զբոսաշրջիկների կողմից՝ իրենց ուղղորդող տեղեկատվության օպերատիվ ստացման նպատակով անհրաժեշտ է նաև, որպեսզի մարզի հիմնական տրանսպորտային հանգույցների տարածքում (օդանավակայան, երկաթուղային կայարան, ավտոկայարան), որտեղ առաջինն են ժամանում զբոսաշրջիկները, մշտապես գործի որակյալ և անվճար Wi-Fi կապ:

Տեղեկատվական միջոցառումների ապահովման գործընթացում կարևոր է նաև մարզի համայնքների դերը: Համայնքներն այս գործընթացներին աջակցող առաջնային և մշտական օղակն են, ուստի նրանց կողմից ցուցաբերված աջակցությունը կարևորագույն գործոն է՝ մարզում զբոսաշրջության բոլոր ճյուղերի զարգացման հարցում: Համայնքների մասնակցության և նրանց կողմից ձեռնարկվող գործողությունների համակարգն անբաժան են սույն հայեցակարգում տեղ գտած մոտեցումներից և նկարագրված գործողությունների համակարգից: Համայնքների ամբողջական ինտեգրումը զբոսաշրջության զարգացման ծրագրերի և միջոցառումների միասնական համակարգի մեջ՝ հանդիսանում է և կարևորագույն բաղադրիչ և նշված ծրագրերի և միջոցառումների հաջող իրականացման գրավակն:

Այս ուղղությամբ, դրական օրինակ կարող է հանդիսանալ «Digital Pomegranate» ընկերության նախաձեռնությամբ ստեղծված Visit Gyumri կայքը և

մոբայլ հավելվածը: Այս նախաձեռնությունը կարևոր խթան է հանդիսանում զբոսաշրջության զարգացման համար և պետք է շարունակական լինի:



Զբոսաշրջության զարգացման համար կարևորագույն քայլերից կարող է դառնալ Շիրակի մարզում **promo-tour** -ի կազմակերպումը, որը Հայաստանի և Շիրակի մարզի առաջատար զբոսաշրջային գործակալություններին հնարավորություն կընձեռի ծանոթանալու մարզի զբոսաշրջային հնարավորություններին և ուղղություններին, ավելի լավ հասկանալու մարզի յուրահատկություններն ու ներուժը:

4.6. Անբարեկարգ միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհներ

Այս հիմնախնդրի լուծման առաջին քայլը կարող է լինել զբոսաշրջային առաջնային երթուղիների մշակումը և դրանց սպասարկող ճանապարհների առաջնային բարեկարգումը և մշտական պահպանությունը:

Վերոնշյալ հարցը հնարավոր է լուծել միայն ՀՀ Շիրակի մազպետարանի, ՀՀ կապի և տրանսպորտի նախարարության ու մարզի համայնքների ակտիվ, նպատակային և համատեղ գործունեության արդյունքում:

4.7. Հուշարձաններին և կոթողներին հարող տարածքներում սպասարկող ենթակառուցվածքների բացակայություն

Այս հիմնախնդիրն ունակ է ոչ միայն հարված հասցնել մարզում զբոսաշրջության զարգացմանը, այլ նաև էապես մեծացնել աղտոտվածության աստիճանը՝ հուշարձաններին և կոթողներին հարող տարածքներում՝ զբոսաշրջային հոսքի (թրաֆիքի) աճի դեպքում:

Անհրաժեշտ է, որպեսզի պատմա-մշակութային հուշարձանների և զբոսաշրջության օբյեկտ հանդիսացող այլ վայրերում գործեն որակյալ սանհանգույցներ, տեղադրված լինեն աղբամաններ ու իրականացվի կանոնավոր աղբահանություն, ինչպես նաև՝ հուշարձանները վանդալիզմից, իսկ հարակից տարածքները՝ աղտոտումից պաշտպանելուն ուղղված հսկողություն, քանի որ մեծ հոսքերը նաև պարունակում են մեծ ռիսկեր:

Պետք է նաև խրախուսել զբոսաշրջային օբյեկտների տարածքում ազգային արհեստներին, խոհանոցին, հուշանվերներին, մշակույթի այլ տարրերին վերաբերվող բաղադրիչների առաջացումն ու առկայությունը:

Նշված հիմնախնդրի լուծումը պետք է ապահովել ՊՄԳ վարձակալական և կառավարման մոդելների ներդրմամբ, ինչպես նաև այդ գործընթացներում՝ հուշարձաններին հարակից համայնքների ներգրավմամբ:

4.8. Տրանսպորտային խնդիրներ

«Շիրակի մարզը Երևանին, ինչպես նաև մարզի բնակավայրերը միմյանց հետ կապող տրանսպորտի գործունեության ոլորտում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք կարող են լրջագույն խոչընդոտ հանդիսանալ զբոսաշրջության զարգացման համար: Խնդիր է նաև այն, որ այսօր, օրինակ, զբոսաշրջիկին հասանելի չէ տրանսպորտային միջոցների տեղաշարժի գրաֆիկի միասնական և օպերատիվ որևէ բազա մարզում:

Միջքաղաքային ցամաքային տրանսպորտը, մեծամասամբ, աշխատում է ուղևորների բավարար քանակի հավաքման սկզբունքով, այլ ոչ թե հստակ և հաստատուն գրաֆիկով, առկա է տրանսպորտային պարկի մաշվածություն և սպասարկման ցածր որակ:

Հստակ հասկանալով, որ տրանսպորտի ոլորտի աշխատանքն ունի առևտրային բնույթ և չի ֆինանսավորվում պետության կողմից, այսինքն, այն ինքնին հակված է ուղևորների բավարար քանակությամբ աշխատելու սկզբունքին, այնուամենայնիվ, անհրաժեշտ է էականորեն մեծացնել տրանսպորտային ընկերություններին ուղղված պահանջները՝ ուղևորափոխադրումների հստակ գրաֆիկի սահմանման, տրանսպորտային ժամանակակից պարկի ապահովման, սպասարկման կուլտուրայի բարձրացման, պիկ ժամերին՝ հերթերի գոյացումը կանխելու, ինչպես նաև ուշ ժամերի համար նախատեսված երթուղիների ավելացման առումով:

Երկաթուղային տրանսպորտի բնագավառում մոտ ժամանակներս նախատեսվում է գործարկել բարձր հարմարավետություն ունեցող՝ Երևան – Գյումրի գնացքը, որը երկու քաղաքների միջև կերթևեկի մշտական պարբերականությամբ՝ դրա վրա ծախսելով էականորեն ավելի քիչ ժամանակ: Խոսքը, սակայն, առայժմ մեկ գնացքի մասին է:



Այս բնագավառում նույնպես առկա են սպասարկման որակի հետ կապված և տրանսպորտային ոլորտին բնորոշ հիմնախնդիրները: Անհրաժեշտ է մշտական բնույթի որակ ապահովել ինչպես գնացքների պահպանության ու խնամքի, այնպես էլ համակարգված ու բազմաշերտ սպասարկման կազմակերպման ուղղություններով (մասնավորապես՝ Գյումրի քաղաքի երկաթգծի կայարանի շենքի և ենթակառուցվածքների պատշաճ որակի, տոմսերի՝ բազմազան եղանակներով և հեշտ վաճառքի, գնացքով երթևեկելու ընթացքում ուղևորների բարձրորակ և մատչելի գներով սպասարկման, կայարանին կից գործող և այն մարզի մյուս հատվածների հետ միացնող հասարակական տրանսպորտի ու տաքսիների ստանդարտիզացված, մատչելի և որակյալ ծառայությունների մասով):

Օդային տրանսպորտի գործող հանգույցի առկայությունը մարզում կարող է հնարավորություն տալ ստեղծելու լրացուցիչ նպատակային և/կամ տարանցիկ երթևեկություն՝ Շիրակի մարզով: Չնայած այն հանգամանքին, որ տարանցիկ ուղևորների մեծ մասը, որպես կանոն, արագ ուղևորվում են իրենց նախօրոք



պլանավորած երթուղիներով, պետք է աշխատանքներ տանել այն ուղղությամբ, որպեսզի Գյումրիում իջնող տարանցիկ զբոսաշրջիկները նախօրոք պլանավորած լինեն գոնե մեկ-երկու օր անցկացնել մարզում:

Այստեղ կարևոր նշանակություն ունի տեղեկատվական ճիշտ աշխատանքը, հատկապես այն նպատակային շերտերի հետ, ովքեր պլանավորում են գնել կամ արդեն գնել են Գյումրի ժամանող ինքնաթիռի տոմս: Նույնիսկ եթե այդ նպատակային շերտի մի փոքր մասն արձագանքի մարզին ավելի հանգամանալի կերպով ծանոթանալու առաջարկին, սա կարող է էականորեն ավելացնել նպատակային զբոսաշրջիկների թիվը մարզում:

Միաժամանակ, պետք է ընդձեռնել, որ միջազգային օդանավակայանի առկայությունը, առանց լրացուցիչ միջոցառումների մշտապես գործող համակարգի, չի կարող բավարար պայման լինել զբոսաշրջիկների կայուն և աճող հոսքի ապահովման համար:

Անհրաժեշտ է մշտական բնույթի որակ ապահովել ինչպես օդանավակայանի և դրա ենթակառուցվածքների մշտական արդիականացման և խնամքի, այնպես էլ ուղևորների համակարգված սպասարկման կազմակերպման ուղղություններով (մասնավորապես, օդանավակայանի տարածքում ուղևորների՝ բարձրորակ և մատչելի գներով սպասարկման, օդանավակայանին կից գործող և այն մարզի մյուս հատվածներին միացնող հասարակական տրանսպորտի և տաքսիների ստանդարտիզացված, մատչելի ու բարձր որակ ապահովող ծառայությունների զարգացման ուղղությամբ):

Անհրաժեշտ է նաև, որպեսզի մարզի տրանսպորտային բոլոր հանգույցները՝ երկաթգծի կայարանը, օդանավակայանը, ավտոկայարանները ոչ միայն կատարեն իրենց հիմնական գործառույթները, այլ նաև, ինչպես նշվեց նախորդիվ, լինեն մարզին (ինչպես նաև՝ Հանրապետությանը) վերաբերվող ինֆորմացիայի ճիշտ ներկայացման և տրամադրման հարթակ:

4.9. Բնապահպանական խնդիրներ

Աղտոտված շրջակա միջավայրը կարող է հարվածի տակ դնել ոչ միայն զբոսաշրջության զարգացումը, այլև լրջորեն վտանգել մարզի բնակչության առողջությունը:

Չնայած վերջին ժամանակներս «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում իրականացված մեծածավալ միջոցառումներին, որոնք առաջին հերթին ուղղված են ոչ նպատակային բնույթի աղբավայրերի փակմանը, այնուամենայնիվ, մարզում մեծ թիվ են կազմում աղտոտված տարածքները:

Խնդրի լուծման համար նախատեսվում են հետևողական գործողություններ հետևյալ ուղղություններով.

ա) Համայնքների առավել ամբողջական և հիմնարար ներգրավում՝ աղբավայրերի վերացման, աղբահանության կազմակերպման և աղտոտման կանխարգելման գործում;

բ) Համայնքների ղեկավարների ավելի խիստ պատասխանատվություն՝ իրենց կողմից ղեկավարվող տարածքներում աղբի առկայության հետ կապված,

գ) Բնակչության շրջանում բնապահպանական դաստիարակության և կրթության ուղղությամբ մշտական և հետևողական աշխատանքների համակարգային իրագործում:

դ) Համայնքների կողմից իրենց վարչական տարածքներում գտնվող զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող վայրերի աղբահանության ընդգրկում՝ համայնքի սանիտարական սխեմայում;

ե) Շաբաթօրյակների պարբերաբար կազմակերպում:

Բնապահպանական հիմնախնդիրների շարքում առանձին տեղ է գրավում մարզում կոյուղաջրերի մաքրման հարցը և կոլեկտորների գրեթե իսպառ բացակայությունը: Այս ուղղությամբ անհրաժեշտ է մոտ ժամանակներս, շահագրգիռ մարմինների հետ, մշակել և հետևողականորեն իրագործել լուծումների նպատակային փաթեթը:

4.10. Ոչ բավարար աշխատանք՝ զբոսաշրջային օպերատորների և ինֆորմացիոն կայքերի հետ

Լրատվական բնագավառում ինտենսիվ աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը ոչ միայն վաղվա, այլ նաև այօրվա հրամայականն է: Մարզը, նույնիսկ այսօրվա հնարավորությունների սահմաններում, ընդունում է ավելի քիչ զբոսաշրջիկներ, քան կարող է:

Մարզում գործող զբոսաշրջային օպերատորների և կազմակերպությունների հետ համատեղ՝ անհրաժեշտ է ավելի հստակ ձևավորել և համակարգել առկա զբոսաշրջային ուղղությունները, տեղեկատվական համակարգը, մշակել և իրագործել մարզին վերաբերվող նպատակային լրատվական միջոցառումներ՝ ինչպես երկրի ներսում (ներքին զբոսաշրջություն), այնպես էլ նրա սահմաններից դուրս (ներգնա զբոսաշրջություն):

«Ոչ զբոսաշրջության պետական կոմիտեի, պետական շահագրգիռ այլ մարմինների հետ անհրաժեշտ է նպատակային և հետևողական համագործակցություն ապահովել, որպեսզի մարզի վերաբերյալ ինֆորմացիան, պետության կողմից իրականացվող ինֆորմացիոն - գովազդային միջոցառումների «խողովակներով», նույնպես ամբողջական և գրավիչ կերպով ներկայացվի արտաքին շուկաներում:

Անհրաժեշտ է նաև մշտական բնույթի նպատակային աշխատանքներ տանել առավել մեծ հաճախելիություն ունեցող մասնագիտացված կայքերի հետ, մշտապես ստեղծել ինֆորմացիոն գործընկերների մեծ և անընդհատ ընդլայնվող շերտ:

V ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT)

Այս բաժնում ամփոփված է մարզի զբոսաշրջության զարգացման ՈՒԹՀՍ (SWOT) վերլուծությունը:

Strengths (ՈՒՃԵՂ ԿՈՂՄԵՐ)	Weaknesses (ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ)
<ul style="list-style-type: none"> • հարմար տրանսպորտային ենթակառուցվածքները (օդանավակայանի, երկաթուղու, Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու առկայությունը), • հարմար աշխարհագրական դիրքը և տրանզիտային հնարավորությունները, • Երևանին մոտիկ լինելու հանգամանքը, • հարուստ պատմա – մշակութային ժառանգությունը, • «Հին Գյումու» առկայության գործոնը, Գյումրի քաղաքի անկրկնելի կոլորիտը, ավանդույթները, հայտնի մարդկանց ծննդավայր լինելու հանգամանքը. Քաղաքային զբոսաշրջության կազմակերպման մեծ դաշտը և հնարավորությունները, • յուրահատուկ և էնդեմիկ խոհանոցը; • էկոլոգիապես մաքուր և գեղեցիկ բնությունը, • շուրջտարյա հանգստի կազմակերպման հնարավորությունները: 	<ul style="list-style-type: none"> • հյուրանոցային փոքր ֆոնդը, • մեծ տարածքների և բնակավայրերի համար՝ ամբողջական կոնցեպտների վրա հիմնված ճարտարապետական և դիզայնի ծավալուն մոտեցումների ու լուծումների, ինչպես նաև՝ համակարգված և երկարաժամկետ քաղաքականության պակասը; • սպասարկման (սերվիսի) ոչ բավարար մակարդակը, • սեզմենտային ուղղվածություն ունեցող և պատրաստի բիզնես – մոդելների բացակայությունը, • գիշերակացով զբոսաշրջիկների պակասը, • զբոսաշրջային սեզմենտների և ուղղությունների ոչ բավարար ու ոչ ամբողջական մշակվածությունը, • զբոսաշրջային ռեսուրսի և առկա առավելությունների ոչ բավարար ապրանքայնացումը, • զբոսաշրջային ուղղություններին և օբյեկտներին վերաբերվող ինֆորմացիայի համակարգվածության և տեղայնացվածության, ինչպես նաև՝ դրա տրամադրման հստակ մեխանիզմների բացակայությունը, • հուշարձաններին և կոթողներին հարող տարածքներում՝ սպասարկող ենթակառուցվածքների բացակայությունը, • անբարեկարգ միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհները, • տրանսպորտային խնդիրները, • բնապահպանական խնդիրները, • ներդրումների ոչ բավարար մակարդակը, ֆինանսական ռեսուրսների սղությունը, • բնակչության հետերկրաշարժային

	<p>հոգեբանությունը,</p> <ul style="list-style-type: none"> • թույլ և խոցելի արտաքին իմիջ, մարզի և Գյումրի քաղաքի նույնականացումը երկրաշարժի հետ:
Opportunities (ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ)	Threats (ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ)
<ul style="list-style-type: none"> • ՀՀ տնտեսական զարգացման ծրագրերում՝ զբոսաշրջությունը որպես գերակա ուղղություն ճանաչելը և համապատասխան պետական քաղաքականությունը, • զբոսաշրջության ծավալների շարունակական աճն աշխարհում, • ներգնա զբոսաշրջային հոսքերի ավելացումը տարածաշրջանում, այդ թվում նաև՝ Հայաստանում, • զբոսաշրջության ոլորտում տրամադրվող արտոնություններն ու ոլորտի ակտիվացմանն ուղղված պետական ծրագրերը, • Հայաստանի, որպես զբոսաշրջային ուղղության, արտաքին պրոպագանդան և գովազդը, • Հայաստանի, որպես զբոսաշրջության համար հետաքրքիր երկրի՝ մշտական գրավչությունը, • սփյուռքի առկայության հանգամանքը, • ներդրումների համար նոր և բավարար եկամտաբերություն ապահովող սեզմենտի առաջացումը՝ արտաքին ներդրողների համար, • անվտանգությունը: 	<ul style="list-style-type: none"> • միջազգային ֆինանսա – տնտեսական ճգնաժամերը, • բնական կատակլիզմները • մեծ մրցակցությունն ինչպես հարևան երկրների, այնպես էլ՝ մյուս մարզերի հետ, • բարձր ծախսերի և բարձր գների միջավայրի ստեղծումը, որը, համապատասխան որակի ծառայությունների բացակայության դեպքում կարող է էական հարված հասցնել ոլորտին:

VI ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հայեցակարգում առաջարկվող միջոցառումներն ու համակարգային բնույթի լուծումները կոչված են կտրուկ ավելացնելու մարզի զբոսաշրջային գրավչությունը, ապրանքայնացնելու մարզի մեծ պոտենցիալը, ավելացնելու բնակիչների, ձեռնարկատերերի և մարզի եկամուտները:

Ակնկալվող արդյունքներն ունեն երկու հարթություն՝ որակական և քանակական:

Ակնհայտ է, որ հայեցակարգում նշված միջոցառումներն ու զարգացումներն անհնարին է իրականացնել՝ առանց այդտեղ նշված հիմնախնդիրների համակարգային լուծման, կամ գոնե՝ դրանց մեղմման:

Հին Գյումրու ամբողջական վերականգնումը, հյուրանոցային և հյուրատնային ֆոնդի ընդարձակումը, սպասարկման որակի բարձրացումը, միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վերանորոգումը, զբոսաշրջային ուղղությունների և դրա հետ կապված ինֆորմացիայի կանոնակարգումը, ճյուղային ու սեզամետային բիզնես – մոդելների ստեղծումը, զբոսաշրջային ենթակառուցվածքների կառուցումը, ավանդույթների, էնդեմիկ խոհանոցի, արհեստների վերածնունդն ու ապրանքայնացումը, տրանսպորտի աշխատանքի բարելավումը, բնակչության մենթալիտետի հետ աշխատանքը, բնապահպանական խնդիրների լուծումը, ինչպես նաև, օժանդակող շատ այլ տարրերի գծով՝ դրական փոփոխությունները ոչ միայն անհրաժեշտ նախապայման կարող են հանդիսանալ մարզում զբոսաշրջության զարգացման համար, այլ նաև կբերեն մեծ դրական որակական փոփոխությունների՝ մարզի բնակիչների մի ստվար հատվածի առօրյա կյանքում:

Համակարգային միջոցառումների իրականացումը մարզում կարող է արմատապես բարձրացնել բիզնես – կուլտուրան և մոտեցումները, նպաստել բնակիչների գործարար հատկությունների ակտիվացմանը, մարդկանց սոցիալապես ավելի պատասխանատու դարձնել, խթանել պրոֆեսիոնալ մոտեցումը՝ կատարվող աշխատանքի նկատմամբ, մարդկանց ավելի մոտեցնել սեփական արմատներին, բարձրացնել նրանց ինքնագիտակցությունն ու ինքնահարգանքը:

Որակական նշված փոփոխությունները կարող են անդառնալիորեն դեպի ավելի լավը փոխել մարզի դեմքը և ներքին դրվածքը: Սա ավելի առաջնային է քանակական փոփոխություններից քանի որ որակական փոփոխություններն ավելի շուտ և, հաճախ ինքնաբերաբար կերպով, կարող են բերել քանակական մեծ դրական փոփոխությունների:

Քանակական արդյունքների հիմնական թիրախներն են հանդիսանում՝ նոր և լավ վարձատրվող աշխատատեղերի քանակի արմատական ավելացումը, ինքնազբաղված և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող բնակիչների թվի կտրուկ աճը, մարզում աղքատության մակարդակի և աղքատների թվի շարունակական և էական նվազումը, մարդկանց և համայնքների եկամուտների ավելացումը, ներդրումների շարունակական աճը և դրանց համար՝ գրավչության նոր մոդելների և շերտերի ստեղծումը:

Կարևորագույն թիրախ է մարզում զբոսաշրջային հոսքի էական մեծացումը, և դրա ներքին կառուցվածքի փոփոխությունը:

Այսօր նույնիսկ մարզում աշխատող զբոսաշրջային օպերատորները չգիտեն, թե տարեկան որքան զբոսաշրջիկ է մտնում Շիրակի մարզ. կան միայն մոտավոր և իրարից խիստ տարբերվող թվեր: Խնդիրն այն է, որ այցելուների ճնշող մասը ինքն է կազմակերպում սեփական այցելությունը դեպի մարզ: Մյուս կողմից էլ՝ զբոսաշրջիկների մեծ մասը նախընտրում է առանց գիշերակացի ուղևորությունները, այսինքն՝ ցերեկն անցկացնելով մարզում՝ նախընտրում է երեկոյան ուղևորվել Երևան կամ արտերկիր:

Տարվա կտրվածքով մարզ այցելող զբոսաշրջիկների (այդ թվում նաև՝ ներքին զբոսաշրջիկների) մոտավոր ընդհանուր թիվը, տարբեր տվյալներով, տատանվում է

30000-35000–ի սահմաններում, որոնց բացարձակ մեծամասնությունը, ինչպես նշվեց, չի գիշերում մարզի տարածքում, այսինքն՝ բավարար գումար չի ծախսում այստեղ:

Հայեցակարգում նշված զարգացումներն ու լուծումներն, այդ թվում, ուղղված են ոչ միայն մարզի զբոսաշրջային թրաֆիկի քանակական էական ավելացմանը, այլև նպատակ են հետապնդում անելու այնպես, որ նույնիսկ ոչ նպատակային կերպով մարզում հայտնված զբոսաշրջիկներին բավական չլինի մեկ օրը՝ մարզին ծանոթանալու համար և որպեսզի նրանց մեծ մասը գոնե մեկ գիշեր մնա այստեղ:

Զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների մեծ մասն ունի ունիվերսալ բնույթ՝ ողջ Հանրապետության համար, իսկ դրանց շարունակական լուծումը հանդիսանում է պետական քաղաքականության կաևորագույն մաս:

Պետական կենտրոնացված աջակցությունն, իհարկե, շատ կարևոր է, սակայն, միաժամանակ, անհրաժեշտ է առկա հիմնախնդիրներ զգալի մասը փորձել լուծել ոչ միայն պետական մարմինների օգնությամբ և պետական միջոցների օգտագործմամբ, այլ նաև՝ ակտիվորեն ներգրավել մասնավոր ներդրողների, միջազգային կառույցների, բարերարների հնարավորություններն ու ՊՄԳ մոտեցումները, համայնքների ներքին հնարավորություններն ու ռեսուրսները: